ըլլալ → ես եմ...
գիտնալ → ես գիտեմ...
ունենալ → ես ունիմ...

## *Γενικές αλήθειες ή διαδικασία!*

Չեմ գիտեր եթէ կարելի է: - **Կ' ըլլայ, կ' ըլլայ**: Ամէն ինչ **կ' ըլլայ**: → *Olur, olur. Her şey olur.*

Ընդհանրապէս Յոլանտացիները լաւ անգլերէն **կը գիտնան**: - Այսքան գիտեմ, ծօ: → *bilerler*

Լաւ ուսուցիչները շատ համբերանք **կ' ունենան**: → *sabırlı olurlar / onların sabıri var*

## *Μέλλοντας*

*Գալ ամիս պիտի գիտնամ եթէ Ամերիկա երթամ:*

*Գալ տարի աւելի ազատ ժամանակ պիտի ունենայ:*

*Օգոստոս ամիսը աղջիկս հոս պիտի ըլլայ:*

*Մենք ձեր ապագան պիտի ըլլանք:*

*Դուք պիտի չգիտնաք ինչ պիտի ընենք:*

*Անոնք խօսելու իրաւունք պիտի չունենան:*

## *Υποθετική*

Եթէ ձեր դասերը սորվէիք, ձեր հայերէնը աւելի լաւ **պիտի ըլլար**:

→ *θα ήταν*

Եթէ ձեր գրութիւնները կարդայիք, նոր բարերը **պիտի գիտնայիք**: → *θα ξέρατε*

Եթէ համբերանք ունենայի, աւելի լաւ արդիւնքներ **պիտի ունենայիք**: → *θα είχατε… ;*

**ԵԹԷ + ΥΠΟΤΑΚΤΙΚΗ → AN**

**Եթէ** ամէն ուրբաթ օրը **գաս**, հայերէն դիւրաւ պիտի սորվիս:

**Եթէ** տըտրակդ **բանաս**, դասդ պիտի կարդաս:

**Եթէ** շնորհիքով **ուզես** խօսիլ, Պոլիս պէտք է երթաս:

**Եթէ** հայերը աւելի զօրաւոր **ըլլային**, Արցախ Հայաստանի մաս մը պիտի կազմէր:

**ՊԷՏՔ Է + ΥΠΟΤΑΚΤΙΚΗ → ΠΡΕΠΕΙ ΝΑ…**

**Պէտք է** կենդրոնանանք հասկանալու համար:

**Պէտք է** կարդանք որպէսզի հասկնանք:

Կենաքին մէջ **պէտք է** յաճախ խնդանք:

Համլսարանին մէջ **պէտք է** մտիկ ընենք:

Դասի ատեն **պէտք է** մասնակցինք: Այսպէս ուսուցիչը մինակ կը զգայ եւ շատ չեն սորվիր:

**ՈՐՊԷՍԶԻ+ ΥΠΟΤΑΚΤΙΚΗ → ΓΙΑ ΝΑ**

Գոգինիա կ՚ երթամ **որպէսզի** միւս հայ ընկերներս տեսնեմ:

Համացանցը կը գործածեմ **Որպէսզի** բարեկամներուս հետ ամէն օր խօսիմ:

Յալէպ կ՚ երթայի **որպէսզի** հայերէնով պարէի:

**Որպէսզի** թրքերէն արագ սորվինք, պէտք է Թուրքիա երթանք եւ հոն քանի մը ամիս մնանք:

Բառապաշար՝

ընկեր // բարեկամ → φίλος

Համացանց → διαδίχτυο

գործածել → χρησιμοποιώ

## Ժամանակ - زمان

անցեալ

ներկայ

ապագայ

Անցեալին մէջ դժուար լեզուներ կը սորվէի:

Ներկայիս միայն դիւրին բաներ կ՚ ուզեմ սորվիլ:

Ապագային մէջ միայն հանգստանալ կ՚ ուզեմ:

Բառապաշար՝

դժուար ≠ դիւրին

հանգիստ → հանգստանալ

## ***Ամիսները***

Յունուար → [h…]
Փետրուար
Մարտ
Ապրիլ
Մայիս
Յունիս → [h…]
Յուլիս → [h…]
Օգոստոս
Սեպտեմբեր
Հոկտեմբեր
Նոյեմբեր
Դեկտեմբեր

*Անցեալ ամիսը Ապրիլ էր:*
*Գալ ամիսը Յունիս պիտի ըլլայ:*

***անցնիլ*** *→ αμεταβατικό ρήμα /* ***անցնել*** *→ μεταβατικό ρήμα*

*Ժամանակը շուտ կ՚ անցնի: Մանաւանդ հայերէնի դասը շուտ կ՚անցնի: Հետաքրքրական վարկեանները արագ կ՚ անցնին:*

*Ձեր հետը աղուոր ժամեր կ՚ անցնեմ: Աղջկաս հետ հաճելի օգոստոս ամիս մը պիտի անցնեմ: Տղուս հետ դժուար է խօսիլ: Երբեմն տհաճ վարկեաններ կ՚ անցնենք:*

Բառապաշար՝

*մանաւանդ → προ παντός*

*երբեմն → κάπου κάπου, κάποιες φορές*

*վայրկեան → 1. λεπτό 2. στιγμή*

*աղջիկ → (γεν.) աղջկայ*

*տղայ → (γεν.) տղու*

πληθ. *տղաներ* ή *տղաք → (γεν.) տղոց*

## Φρεσκάρισμα

*Գ գ → [κιμ] μεταγραφή: k*

*գին – գնել – գտնել – գիւտ – գինի – գտնուիլ*

*Դ դ → [τα] μεταγραφή: t*

*դաս – դասաւանդել – դասական – դասարան – դալար – դադրիլ (σταματάω)*

*Զ զ → [ζα] μεταγραφή: z*

*զիս – զայն – զինք – զանոնք – զիրենք – զէնք (όπλο) – զինուոր (στρατιώτης) – զինադադար (παύση πυρός)*

*Թ թ → [το] μεταγραφή: t'*

*թատրոն - թէյ – թագ – թագաւոր – թութակ*

*Ք ք → [κε] μεταγραφή: k'*

*Քրիստոս – քնանալ – քաղաք – քալել - քահանայ*

## *Ընթերցում – Ανάγνωση*

Մօրս հետ ֆրանսերէն կը խօսիմ:

Մեծ հօրս հետ գերմաներէն կը խօսէի:

Մեծ մօրս հետ բնաւ չէի խօսիր:

Տղուս քով կը մնամ եթէ Պերլին երթամ:

Աղջկաս քով գտնուիլ աւելի հաճելի է:

Տղաքը իրենց հայրերուն հետ յաճախ դժուար յարաբերութիւններ կ՚ ունենան:

Ընդհանրապէս աղջիկները իրենց հայրերուն հետ սքանչելի յարաբերութիւններ կ՚ ունենան:

Բառապաշար՝

յարաբերութիւն → [h…] → σχέση

բանի մը / մէկու մը հետ յարաբերիլ → σχετίζομαι με κάτι / κάποιον

յարաբերական → σχετικός

## *Ընթերցում – Ανάγνωση*

*Կեանքին մէջ ամէն ինչ **յարաբերական** է:*

*Քաղաքական կարծիքներն ալ **յարաբերական** են: Պարոն Մարգարեան Թուրքիոյ մէջ ձախակողմեան է, բայց Յունաստանի մէջ իբր աջակողմեան կը նկատուի:*

Բառապաշար՝

*աջ → δεξιά – ձախ → αριστερά*

*քաղաք → πόλη – քաղաքան → πολιτικός – քաղաքականութիւն → πολιτική*
*կողմ → πλευρά*

επίθετα: աջակողմեան ≠ ձախակողմեան

կարծել → νομίζω – կարծիք → γνώμη, πεποίθηση

*Ընթերցում – Ανάγνωση*

*Պարոն Մարգարեանի քաղաքական կարծիքները միշտ նոյնն են*

*բայց տարբեր երկիրներու մէջ մարդիկ զանոնք տարբեր կը*

*նկատեն:*

*տարբեր ≠ նոյն*

*Ընթերցում – Ανάγνωση*

*Թուրքիա եւ Յունաստան տարբեր երկիր են: Կիպրոս եւ*

*Յունաստան արդեօք նոյն երկիր է:*

*Լիբանան եւ Սուրիա տարբեր պետութիւններ են բայց արդեօք*

*նոյն երկիր է:*